

րորդ կցուրդը (antiphone) . . . կ'աւսասանեն ԿԸ սաղմուք «Կեցո զիս Ասուած, զի հասին ջուրք յանձն իմ, ընկրայ ես ի խորս անդնդոց, ուր ոչ գոյ ինձ հակգիս» :

Այս սաղմուք բարձր աստիճանով մեխական է, կը գուշակէ մեր Փրկչին տառապանքը խաչելութեան ժամանակ : Պէտք կ'ըլլայ հոս նշանակել այն համարները որ մասնաւորապէս կը վերաբերին Յիսուսի Քրիստոսի բերուիլը Կայիափայի ատեանը, որուն տան մէջ գուժարուած էր քահանայապետներու և Հրէից ծերերուն ժողովը, ի ինդիր վկայութեան ընդդէմ Յիսուսի, մեռցնել տալու համար զԱնիկա — 5 համար. «քազումք եղև իսն զհեր զըլխոյ իսնոյ, ոյք աշխն զիս ի սարսպարուց» — 6 համար. «գորացան յիս քշնալիք իմ եւ աւեղիք իմ ի նսւնիր, ինչ գոր ոչ յաիշսակեալ էի՝ տուծի ինցա» — 10 համար. «օտար եղէ եւ յեղրաց իսնոց եւ հիւր որդոց սոր իսնոյ» — 11 համար. «նախանձ սակ քո կեր զիս, եւ նախասինք նախասչաց քոց անկան ի վերայ իմ» : Այս համարները հաստատուեցան այն անարգանքի և նախատանաց տեսարանով զոր պարզեցին Սենեարիոնի անդամները Յիսուսը մահուան դատապարտելով :

Այս հատուածներուն վրայ պէտք է աւելցնել նաև 27 համարը. «եղիցին քնակոքիւնք ինցա աւերակ, եւ ի յարկս ինցա մի ոք իցէ որ քնակիցէ» : Անէժք մը որ աւերակի կը վերածէ Յիսուսը հալածողներու ցեղը և բնակարանը. անէժք մը որուն ճշգրտէն կատարուամը կը հաստատէին Երուսաղէմի քրիստոնեաները՝ ցոյց տալով ամէն սղզի ուխտաւորներուն Կայիափայի տան աւերեալ պատերը. արդէն յիշեցինք այս մասին Կիւրեղ Երուսաղէմացիին խօսքերը :

Յիշենք նաև լատին բանաստեղծ Prudenceը (405), որ իր գործերուն շատ տեղերուն մէջ իրազեկ կը թուի Պողոստինի տեղական աւանդութեանց ան հետեւեալ կերպով կը բացատրէ իր Dittochaeon աշխատութեան մէկ քառեակին մէջ. «ան ինկած է. հայտնիչ Կայիափայի ամբարիշտ տունը, ուր Քրիստոսի սուրբ երեսը ապտակուած է. այս է վիճակը մեղաւորներուն, իրենց մահէն յետոյ անոնք պիտի ապրին միայն իրենց աւերեալ մահարտր յիշատակարաններուն մէջ» :

Կայիափայի տան աւերակները թողուած էին այդ վիճակին մէջ իբր մարգարէական յիշատակարան մը և աստուածային վը-